Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԴԱՇՏԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ)

Սամվելյան Ն. Ի.
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: **nerses.samvelyan.70@mail.ru**

Ուսումնական համալիր դաշտային աշխարհագրական պրակտիկան աշխարհագրական բարձրագույն կրթության համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկն է և ունի բացառիկ նշանակություն աշխարհագրության ապագա ուսուցիչների տեսական գիտելիքներն ամրապնդելու, պրակտիկ կարողությունները, ունակություններն ու հմտությունները զարգացնելու գործում: Դրա հետ մեկտեղ, աշխարհագրական ուսումնական համալիր պրակտիկաները դաշտային համալիր հետազոտությունների մեթոդներին տիրապետելու անփոխարինելի միջոց են, որոնք, միևնույն ժամանակ, ուսանողների մոտ ձևավորում են նաև դպրոցականների հետ աշխատելու, աշխարհագրական-ճանաչողական ու հայրենագիտական էքսկուրսիաներ վարելու կարողություն ու հմտություններ:

Բանալի բառեր. *աշխարհագրական պրակտիկայի կառուցվածքային և կազմակերպչական բովանդակություն, պրակտիկայի նախապատրաստական, դաշտային և կամերալ փուլեր, պրակտիկայի կազմակերպման եղանակներ:*

Ներկայացված է խմբագրություն ***14.03.2018***

Բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում առաջնահերթ նշանակություն է տրվում ուսանողների մասնագիտական և մանկավարժական որակների բարձրացմանը: Համոզված ենք, որ բուհական համակարգված կրթության բարելավման գործընթացում հուսալի արդյունք կարող են ապահովել ուսումնական համալիր դաշտային պրակտիկաները:

Ուսումնական համալիր դաշտային պրակտիկաների նշանակությունը բացառիկ է հատկապես աշխարհագրության մասնագիտության ուսանողների համար: Կասկածից վեր է այն, որ աշխարհագրական համալիր դաշտային պրակտիկաները նպաստում են ուսանողների մասնագիտական կարողությունների գործնականում կիրառելու հմտությունների ձևավորմանը: Ուստի, պատահական չէ, որ դաշտային ուսումնական պրակտիկան համարվում է բուհական աշխարհագրական կրթության կարևոր բաղադրիչներից մեկը:

Ուսումնական համալիր դաշտային պրակտիկան հիմնվում է աշխարհագրական մի շարք գիտակարգերից՝ ընդհանուր երկրագիտությունից, լանդշաֆտագիտությունից, տեղագրությունից, գեոմորֆոլոգիայից, ջրաբանությունից, կլիմայագիտությունից, հողերի աշխարհագրությունից, կենսաաշխարհագրությունից, սոցիալ-տնտեսական և բնակչության աշխարհագրությունից ուսանողների ստացած տեսական

գիտելիքների վրա: Հետևաբար, դաշտային պայմաններում հետազոտական աշխատանքներ իրականացնելիս ուսանողները պետք է տիրապետեն վերը նշված գիտակարգերի հիմունքներին և կարողանան իրենց տեսական գիտելիքները հմտորեն կիրառել պրակտիկ աշխատանքում:

Մինչև դաշտային ուսումնական պակտիկայի մեկնելը ուսանողները պետք է տիրապետեն դաշտային դիտարկումներ կատարելու մեթոդներին, կարողանան օգտվել համապատասխան գործիքներից ու սարքավորումներից, տիրապետեն բնության մեջ աշխատելու անվտանգության նորմերին ու կանոններին, համապատասխան հանդերձանք ընտրելիս առաջնորդվեն պրակտիկայի անցկացման տեղավայրի կլիմայական «պահանջներով», այն է՝ պատրաստ լինեն պրակտիկայի ընթացքում եղանակային պայմանների կտրուկ փոփոխություններին, իմանան անցկացված պրակտիկայի արդյունքների հաշվետվության ձևերը և դրանց ներկայացվող պահանջները, ինչին համապատասխան էլ նրանք պետք է գնահատվեն:

Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ դաշտային պրակտիկայի արդյունավետ կազմակերպումն ու բարեհաջող ընթացքը մեծապես պայմանավորված են հենց պրակտիկաների անցկացման տեղավայրերի ճիշտ ընտրությամբ: Դրանք պետք է հետաքրքիր լինեն և բավարարեն կոմպլեքսային դիտարկումների պահանջները:

Դաշտային ուսումնական պրակտիկաների նպատակը լսարանային դասախոսություններից, գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքներից ստացած տեսական գիտելիքների առարկայացում է, ուսանողների մոտ գործնական ունակություններ ու հմտություններ, դաշտում ինքնուրույն դիտարկումներ և ուսումնասիրություններ կատարելու, բնահասարակական երևույթների պատճառահետևանքային կապերը լուսաբանելու, ինչպես նաև «բնություն-հասարակություն-տնտեսություն» համակարգում փոխադարձ կապերն ու փոխհարաբերությունները վերլուծելու և գնահատելու կարողության ձևավորումը:

Ուսումնական աշխարհագրական պրակտիկայի հիմնական խնդիրներն են.

- ուսանողների ֆիզիկաաշխարհագրական և սոցիալ-տնտեսաաշխարհագրական տեսական գիտելիքների, գործնական ունակությունների ու հմտությունների ամրապնդումը,
- դաշտային պայմաններում ուսանողներին ծանոթացնել աշխարհագրական համալիր հետազոտությունների և համապատասխան սարքավորումներից օգտվելու մեթոդներին, բնության բաղադրիչների և բնատարածքային համալիրների ձևավորման ու զարգացման օրինաչափություններին, փոխազդեցությանն ու փոխհարաբերությանը, տնտեսության տարածքային կազմակերպման բնահասարակական գործոններին և սոցիալ-տնտեսական համակարգերին,
- ձևավորել գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, դաշտային նյութը մշակելու, լանդշաֆտի բաղադրիչների և տնտեսական գործունեության միջև պատճառահետևանքային կապերը բացահայտելու կարողություններ,
- բնական համակարգերի ուսումնասիրման դաշտային մեթոդների և տեխնիկական միջոցների յուրացում, համակարգային և տարածաժամանակային մտածողության զարգացում, հետազոտական և գիտաստեղծագործական հմտությունների կատարելագործում,
- ձևավորել գիտական հաշվետվության պատրաստման փաստական նյութեր հավաքագրելու, վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, հավաքագրված դաշտային նյութերի հիման վրա զեկույցներ պատրաստելու ունակություններ:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխարհագրության բաժնում ուսումնական համալիր դաշտային պրակտիկան կազմակերպվում է ուսումնառության երկրորդ և երրորդ կուրսերի վերջում, երբ ուսանողներն արդեն հիմնարար գիտելիքներ ունեն աշխարհագրության վերը նշված ճյուղային գիտություններից: Այդ հանգամանքն էլ ընկած է ուսումնական համալիր աշխարհագրական պրակտիկայի կառուցվածքային բովանդակության հիմքում (աղյուսակ 1.)

Աղյուսակ 1.
Ուսումնական համալիր աշխարհագրական պրակտիկայի
կառուցվածքային բովանդակությունը

Պրակտիկայի հիմնական բաժինները	Ուսումնական աշխատանքների տեսակները	Ընթացիկ ստուգման ձևերը
Նախապատրաստական աշխատանքներ	Ծանոթացում պրակտիկայի նպատակներին, խնդիրներին, անցկացման տեղավայրին, ուսումնական գրականությանը,դաշտային հետազոտությունների տեխնիկական միջոցներին ու սարքավորումներին, հետազոտությունների կատարման ռիսկային գործոններին, անվտանգության կանոններին: Նախապատրաստական և կողմնորոշող բնույթի դասախոսություններ: Ծանոթացում դաշտային համալիր և ճյուղային աշխարհագրական հետազոտությունների մեթոդներին:	Դաշտային օրագիր
Դաշտային հետազոտական աշխատամքներ	Դաշտային համալիր աշխարհագրական դիտարկումներ և հետազոտություններ:	Դաշտային օրագիր, հաշվետվություն
Կամերալ աշխատանքներ, արդյունքների ամփոփում	Ստացված նյութերի կամերալ մշակում, պրակտիկայի արդյունքների ամփոփում: Հաշվետվության կազմում:	Ստուգարք
Կոնֆերանս: Ստուգարք	Գիտական զեկույց	Գնահատում

Ուսումնական պրակտիկաները կազմակերպվում են քայլերի հստակ հաջորդականությամբ, որոնք պետք է ամրագրվեն պրակտիկայի նախօրոք մշակված ծրագրում: Ծրագրային փաթեթը պետք է ներառի ուսումնական պրակտիկայի կազմակերպչական աշխատանքների մանրամասն նկարագրությունն ու ուղղակիորեն առնչվի ուսանողների (պրակտիկայի) գիտա-գործնական նպատակներին:

Համալիր դաշտային աշխարհագրական հետազոտությունների անցկացման ժամկետների կտրվածքով ուսումնական պրակտիկայի ծրագրի իրագործման հաջորդական քայլերի խմբավորման արդյունքում էլ ձևավորվում են պրակտիկաների կազմակերպման շարունակական փուլերն ու բովանդակությունը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.
Ուսումնական դաշտային աշխարհագրական համալիր պրակտիկաների կազմակերպչական բովանդակությունը

Օր	**Աշխատանքների բովանդակությունը**
	Պրակտիկայի նախապատրաստական փուլ
1	Պրակտիկայի անցկացման համար նախատեսված անձնական հանդերձանքի, սննդի, սարքավորումների, աշխատանքային գործիքների կոմպլեկտավորում: Պարտականությունների բաշխում և հանդերձանքի նկատմամբ պատասխանատուների ընտրություն: Ցուցումներ անվտանգության և դաշտային պայմաններում ուսանողների վարվելաձևի վերաբերյալ: Անհատական իրերի՝ համապատասխան հագուստատեսակի, ուսումնական պարագաների, հիգիենայի պարագաների և այլն առկայության սգուգում: Ուսանողների և ուսանողական աշխատանքային խմբերի ցուցակների ճշգրտում, պրակտիկայի մեկնման փաստաթղթերի ստացում: Զրույց նախատեսվելիք երթուղիների աշխարհագրական առանձնահատկությունների և ճանապարհին կատարվելիք դիտարկումների վերաբերյալ:
	Պրակտիկայի դաշտային և կամերալ փուլեր
2	Պրակտիկայի կազմակերպման տեղավայր մեկնող ուսանողական անձնակազմի հավաքագրում և մեկնում պրակտիկայի տեղավայր: Տեղում կազմակերպչական հարցերի լուծում: Ուսանողների տեղավորում նախատեսված ուսումական բազայում: Երթուղային դիտարկումներ, հետազոտություններ: Ղեկավարի զրույց-դասախոսություն պրակտիկայի տեղավայրի բնության, բնակչության և տնտեսության, դաշտում և ուսումնական բազայում ուսանողների անվտանգության ապահովման կանոնների վերաբերյալ: Հանդիպում տեղային ինքնակառավարման մարմինների հետ: Պրակտիկայի տեղավայրում ուսանողների առօրյա ռեժիմի որոշում:
3	Պրակտիկայի ղեկավարի գլխավորությամբ ուսումնա-ճանաչողական էքսկուրսիաներ դեպի բնություն: Բնական լանդշաֆտների առանձին տիպերի ձևաբանական հորինվածքի, ձևաբանական միավորների՝ բնատեղամասերի և ֆացիաների սահմանների որոշում: Դաշտային նմուշ-հավաքածուների ընտրություն և մշակում: Աշխատանքային օրվա արդյունքների ամփոփում:
4, 5	Հանգուցային տեղամասերում ուսանողների անհատական և խմբային աշխատանքներ (բնատեղամասերի տիպերի, ֆացիաների առանձնացում և նկարագրում, պրոֆիլների, սխեմաների կազմում): Օրվա արդյունքների ամփոփում:
6, 7	Դաշտային դիտարկումներից ստացված նյութերի մշակում, աշխատանքների արդյունքների ամփոփում: Հաշվետվության կազմում և նախապաշտպանություն: Ամփոփիչ կոնֆերանսին ներկայացվելիք զեկուցումների թեմաների բաշխում: Պրակտիկայի անցկացման ուսումնական բազայի մաքրման աշխատանքներ, անձնական հանդերձանքի կոմպլեկտավորում:
7	Խմբի վերադարձ ֆակուլտետ: Սարքավորումների, դաշտային աշխատանքների գործիքների հանձնում: Հաշվետվության՝ ուսանողի դաշտային օրագրի, լուսանկարների, քարտեզագրական նյութերի, հաշվարկային աղյուսակների, գրաֆիկների, պրոֆիլների և այլ նյութերի պատրաստում և ձևավորում: Պրեզենտացիաների պատրաստում:
	Կոնֆերանս և ստուգարք
8	Կոնֆերանսի կազմակերպում և հաշվետվություն

Հատկապես պետք է ընդգծել եզրափակիչ և նախապատրաստման փուլերի կապը, քանզի եզրափակիչ փուլում է վերջնականորեն գնահատվում պրակտիկայի արդյունավետությունը, որը հնարավորություն է տալիս հետադարձ կապ

հաստատել նախապատրաստման փուլի հետ և անհրաժեշտության դեպքում՝ կատարել փոփոխություններ: Հիմնական հաշվետվությանը կցվում են դաշտային օրագիրը, ուսանողի կազմած սխեմաները, աղյուսակները, աշխատանքային լուսանկարները և այլն: Դաշտային և կամերալ պայմաններում աշխատելու համար անհրաժեշտ են հետևյալ միջոցները՝ տեխնիկական կշեռք, օդի, ջրի, հողի ջերմաստիճանը, օդի խոնավությունը, տեղանքի բարձրությունը, մթնոլորտային ճնշումը, տեղումների քանակը չափող տեխնիկական միջոցներ, չափերիզ, բահ, դանակ, մկրատ, հողի տիպերի գունային սանդղակ, միլիմետրային թուղթ, դաշտային համակարգիչ, GPS, լուսանկարչական սարք, տետր, A4 չափի թուղթ, մատիտ, գրիչ, քանոն, նմուշառման համար տոպրակներ, թեմատիկ քարտեզներ, լանդշաֆտային պրոֆիլներ, տիեզերական լուսանկարներ, դաշտային հետազոտությունների մեթոդական ուղեցույցներ:

Դաշտային պրակտիկայի արդյունավետ կազմակերպումն ու բարեհաջող ընթացքը պայմանավորված են նաև պրակտիկայի կազմակերպչական բովանդակության ճիշտ մշակմամբ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Ուսումնական դաշտային աշխարհագրական համալիր պրակտիկաների կազմակերպչական բովանդակությունը

Օր	**Աշխատանքների բովանդակությունը**
	Պրակտիկայի նախապատրաստական փուլ
1	Պրակտիկայի անցկացման համար նախատեսված անձնական հանդերձանքի, սննդամթերքի, սարքավորումների, աշխատանքային գործիքների կոմպլեկտավորում: Ցուցումներ անվտանգության և դաշտային պայմաններում ուսանողների վարվելաձևի վերաբերյալ: Անհատական իրերի՝ համապատասխան հագուստատեսակի, ուսումնական պարագաների, հիգիենայի պարագաների և այլն առկայության սգուգում: Ուսանողների և ուսանողական աշխատանքային խմբերի ցուցակների ճշգրտում, պրակտիկայի մեկնման փաստաթղթերի ստացում: Զրույց նախատեսվելիք երթուղիների աշխարհագրական առանձնահատկությունների և ճանապարհին կատարվելիք դիտարկումների վերաբերյալ:
	Պրակտիկայի դաշտային և կամերալ փուլեր
2	Պրակտիկայի մասնակիցների հավաքագրում, մեկնում պրակտիկայի վայր և կազմակերպչական հարցերի լուծում: Երթուղային դիտարկումներ, հետազոտություններ: Ղեկավարի զրույց-դասախոսություն պրակտիկայի տեղավայրի բնության, բնակչության և տնտեսության, դաշտում և ուսումնական բազայում ուսանողների անվտանգության ապահովման կանոնների վերաբերյալ: Հանդիպում տեղային ինքնակառավարման մարմինների հետ: Պրակտիկայի տեղավայրում ուսանողների առօրյա ռեժիմի որոշում:
3	Պրակտիկայի ղեկավարը կազմակերպում է ուսումնա-ճանաչողական էքսկուրսիաներ դեպի բնություն: Բնական լանդշաֆտների առանձին տիպերի ձևաբանական հորինվածքի, ձևաբանական միավորների՝ բնատեղամասերի և ֆացիաների սահմանների որոշում: Դաշտային նմուշ-հավաքածուների ընտրություն և մշակում:
4,5	Հանգուցային տեղամասերում ուսանողների անհատական և խմբային աշխատանքներ: Օրվա արդյունքների ամփոփում:
6,7	Դաշտային դիտարկված նյութերի մշակում, արդյունքների ամփոփում: Հաշվետվության կազմում և նախապաշտպանություն: Ամփոփիչ կոնֆերանսին ներկայացվելիք զեկուցումների թեմաների բաշխում:
7,8	Պրակտիկայի ամփոփում: Սարքավորումների, դաշտային աշխատանքների գործիքների հանձնում: Կոնֆերանսի կազմակերպում և հաշվետվության պաշտպանություն:

Դաշտային պրակտիկայի արդյունավետ կազմակերպումն ու բարեհաջող ընթացքը պայմանավորված է նաև պրակտիկայի տեղավայրի ճիշտ ընտրությամբ: Այն պետք է հետաքրքիր լինի աշխարհագրական տեսակետից և բավարարի համալիր աշխարհագրական դաշտային պրակտիկայի պահանջներին:

Դաշտային ուսումնական աշխարհագրական պրակտիկաների բովանդակության ու կազմակերպման հետագա կատարելագործումը ենթադրում է մանկավարժական գործունեության այնպիսի ուղղությունների ներդրում, որոնք կնպաստեն աշխարհագրության ապագա ուսուցիչների մոտ դպրոցական ուսումնական պրակտիկաներ կազմակերպելու, հայրենի երկրի կոնկրետ բնատարածքում աշակերտների հետ հայրենագիտական հետազոտություններ կատարելու, սովորողների ուսումնական նախագծերը ղեկավարելու ունակությունների ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սամվելյան Ն. Ի. Ուսումնական բնագիտական դաշտային պրակտիկաները որպես բուհական աշխարհագրական կրթության բաղադրամաս, «Բնագետ» Համահայկական կրթական III գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատ, Երևամ, 2012, էջ 221-223,
2. Սամվելյան Ն. Ի. Մաթոսյան Մ. Ռ. Ուսումնամանկավարժական պրակտիկաները բուհական աշխարհագրական կրթության բաղադրամաս. նպատակը և խնդիրները, «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հանդես, 7-9 (34), Երևան, 2012, էջ 79-82,
3. Полевые практики по географическим дисциплинам, под. ред. В. А. Исаченкова, Изд-во Просвещение, Москва, 1980, 224 с.
4. Полевые практики в системе высшего профессионального образования, Материалы международной конференции (Алтай, 21-29 августа 2009 г), Новосибирск, 2009, 232 с.

РЕЗЮМЕ
КОМПЛЕКСНАЯ УЧЕБНАЯ ПОЛЕВАЯ ПРАКТИКА В СИСТЕМЕ ГЕОГРАФИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ (СОДЕРЖАНИЕ, ЭТАПЫ И СПОСОБЫ ОРГАНИЗАЦИИ)

Самвелян Н. И.

В системе подготовки учителей географии комплексная полевая практика занимает особое и одно из наиболее важных мест. Именно этот вид практики дает студентам-географам навыки и умение наблюдать и познавать взаимосвязи закономерности природы как сложной, диалектически противоречивой системы. Это не только получение практических навыков и умений, но и путешествия, встречи с разными географическими объектами, как естественного, так и социально-экономического характера.

Основными формами работы на полевых практиках по географии являются учебные экскурсии, топографическая съемка местности, описание компонентов природы и природно-территориальных комплексов, проведение измерений и последующих расчетов, обработка собранного материала.

В статье представлены содержание, основные этапы и способы организации комплексной учебной полевой географической практики и обоснована ее значение в системе высшего педагогического и географического образования.

SUMMARY
COMPLEX EDUCATIONAL FIELD PRACTICES IN THE SYSTEM GEOGRAPHIC EDUCATION
(CONTENTS, STEPS AND METHODS OF THE ORGANIZATION)
Samvelyan N. I.

In the system of training teachers of geography, comprehensive field practice occupies a special and one of the most important places. This kind of practice gives students and geographers the skills and the ability to observe and learn the interrelationships of regularities as a complex, dialectically contradictory system. This is not only the acquisition of practical skills and skills, but also travel, meetings with different geographical objects, both natural and socio-economic.

The main forms of work in field practices in geography are study tours, topographical survey of the terrain, description of the components of nature and natural-territorial complexes (PTC), measurement and subsequent calculations, processing of collected material.

The article presents the content, main stages and methods of organization of integrated field training geographic practice and substantiates its importance in the system of higher pedagogical and geographic education

The article presents the content, main stages and methods of organization of integrated field training geographic practice and substantiates its importance in the system of higher pedagogical and geographic education